ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, ՊՐՈՖԵՍՈՐ ՎԱՐԴԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

8-ը նոյեմբերի, 2022թ.

Կարծիք

Վարդիթեր Իվանի Հակոբյանի «21-րդ դարի ամերիկյան մամուլում պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների լեզվագործաբանական առանձնահատկությունները» Ժ. 02. 07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսության մասին

Լեզվագործաբանությունը սերտորեն կապված է մարդկային հաղորդակցման հետ, որի ընթացքում, շատ հաճախ խոսողի կողմից արտաբերված ասույթը փոխանցում է ավելի շատ, քան արտաբերվում է: Այդ երևույթը գործաբանության մեջ ստացել է «իմպլիկատուրա» եզրաբառը: Որպեսզի հաղորդակցումը ընթանա արդյունավետ և դյուրին կերպով, այն պետք է պահպանի քաղաքավարության կանոնները: Սույն ատենախոսությունը նվիրված է քաղաքավարության և իմպլիկատուրա հասկացությունների կապի, դրանց տեսակների, պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներում լեզվագործաբանական ուսումնասիրությանը: Այդ տեսակետից թեման արդիական է, քանի որ քաղաքավարությունը՝ որպես հաղորդակցման համընդհանուր սկզբունք կարևոր դեր է կատարում մարդկանց սոցիալական կյանքում՝ ներդաշնակ և համաչափ փոխհարաբերությունների ստեղծման հարցում: Աշխատանքի նորույթն այն է, որ առաջին անգամ քննության են առնվում 21-րդ դարի ամերիկյան մամուլում պաշտոնական և ոչ պաշտոնական

հարցազրույցների առանձնահատկությունները՝ լեզվագործաբանական տեսանկյունից:

Աշխատանքի փաստական հիմքն են 21-րդ դարի ամերիկյան համացանցային մամուլից քաղված հարցազրույցները, որոնք Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Բարաք Օբաման տվել է տարբեր լրատվամիջոցների:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Աշխատանքի առաջին գլուխը՝ «Լրագրային հարցազրույցների առանձնահատկությունները», բաղկացած է երեք ենթագլխից, որտեղ ներկայացված են պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների առանձնահատկությունները, դրանց բնորոշ հարցերի տեսակները, ընդ որում հաշվի են առնվել զրուցակիցների փոխհարաբերությունները, կենսափորձը, նրանց աշխարհայացքը և այլ գործոններ:

Երկրորդ գլխում՝ «Քաղաքավարության իմպլիկատուրայի և դրա տեսակների դրսևորման օրինաչափությունները», ներկայացված են «քաղաքավարության իմպլիկատուրա» հասկացության առանձնահատկությունները՝ կառուցման բնույթը և դրանց տեսակների առկայացումը հաղորդակցման մեջ:

Երրորդ՝ «Պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների լեզվագործաբանական վերլուծություն» վերնագրված գլխում, քննության են ենթարկվում Բարաք Օբամայի պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցները:

Եզրակացության մեջ ամփոփված են հետազոտության արդյունքները, գրականության ցանկը ներկայացնում է աշխատանքում օգտագործված տեսական և փաստական աղբյուրները:

Ատենախոսը մշակել է թեմային առնչվող զգալի թվով գրականություն՝ ընդգրկելով լեզվագործաբանության ոլորտում հայտնի լեզվաբանների գրեթե բոլոր հիմնական աշխատությունները:

Վերլուծության են ենթարկվել մամուլում առավել ճանաչված հարցազրույցներ՝ չորս պաշտոնական և չորս ոչ պաշտոնական, որոնք քննվել են ըստ ատենախոսի առջև դրված նպատակների և խնդիրների: Արդարացի է Բարաք Օբամայի ընտրությունը, որպես հարցազրույցների գլխավոր մասնակցի, ով հայտնի է ոչ միայն որպես ազդեցիկ քաղաքական գործիչ, որի խոսքը աչքի է ընկնում մեծ արտահայտչականությամբ, համոզվածությամբ, հարուստ բառապաշարով, այլև որպես անձնավորություն՝ բաց, անկեղծ, բարի ու համեստ, միևնույն ժամանակ սեփական արժանապատվության մեծ զգացումով: Ողջունելի ընտրություն է կատարվել նաև հարցազրուցավարների առումով. այստեղ ընդգրկված են Օփրա Ուինֆրին /ամերիկյան հայտնի լրագրող/, Մայա Ռոդանը /Time-ի թղթակից/, Դեյվիդ Աքսելրոդը /քաղաքական վերլուծաբան, նախագահի գլխավոր խորհրդական/, Սթիվ Հարվին /NRP-ի թղթակից/, Ջոն Սոփելը /խմբագիր/ և Հիշամ Մելհեմը /լրագրող/:

Այժմ կցանկանայինք անդրադառնալ այն բացթողումներին, որոնք ատենախոսությունը դարձնում են խոցելի և ոչ լիարժեք:

1. Սկսենք ատենախոսության վերնագրից՝ «21-րդ դարի ամերիկյան մամուլում պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների լեզվագործաբանական առանձնահատկությունները»: Կարծում ենք վերնագիրը բավականին ընդհանրական է ատենախոսությունում կատարված աշխատանքի համեմատ: Հետազոտությունում խոսք է գնում հիմնականում Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ՝ Բարաք Օբամայի հարցազրույցների մասին, որոնք վեջինս տվել է տարբեր լրատվամիջոցներին՝ BBC News, US Canada, CNBC, NPR, Time և այլն: Այսինքն՝ վերնագրում հիշատակված «առանձնահատկություններ»-ը վերաբերում են միայն Բարաք Օբամային և չեն ընդգրկում պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների առանձնահատկությունները առհասարակ:

2. Հեղինակը հարցազրույցների վերլուծության ժամանակ սահմանափակվել է է քաղաքավարության իմպլիկատուրայի հետևյալ տեսակներով՝ խրախուսող /enhancement politeness/, փոխհատուցող /compensatory/, արժանիքները գնահատող /demeanour politeness/, պայմանական /provisional politeness/ և այլն: Այդպիսի մոտեցմամբ, ըստ երևույթին, դժվար էր կատարել ավելի ճշգրիտ, խորը և հանգամանալից քննություն: Զարմանալի չէ, որ նման մեթոդաբանության արդյունքում (նույնիսկ միայն խրախուսուղ քաղաքավարության շրջանակներում) ատենախոսության մեջ կարմիր գծով անցկացվում է այն միտքը, որ Բարաք Օբաման «բարձր կարծիքի չէ իր մասին, չնայած իր բարձր սոցիալական կարգավիճակին» (էջեր՝ 56, 61, 67, 73, 77, 107, 108, 109, 126):

Լեզվագործաբանության մեջ կան քաղաքավարության այլ չափանիշներ, որոնք Լիչը անվանում է քաղաքավարության մաքսիմներ /politeness maxims/, ինչը հիշատակվում է ատենախոսության մեջ (էջ 33): Դրանք են՝ առատաձեռնություն /generosity/, նրբազգացություն /tact/, ինքնապարծություն կամ դրա բացակայությունը /approbation/, համեստություն /modesty/, համաձայնություն /agreement/, համակրանք /sympathy/: Դրանք քաղաքավարության իմպլիկատուրայի տեսակների դրսևորման լավագույն ցուցիչներ են: Այս մեխանիզմի կիրառության դեպքում հնարավոր կլիներ կատարել ավելի ճշգրիտ, կոնկրետ և բազմակողմանի հետազոտություն:

Լուսաբանենք դա հետևյալ օրինակով (էջ 107):

Երբ հարցազրուցավարը նշում է այն բուռն ընդունելության մասին, որին Օբաման արժանացել էր Kennedy Center Awards-ում, վերջինս արձագանքում է՝ "They were applauding Michelle's dress, which was spectacular, by her own standards" («Այդ ծափահարությունները ոչ թե իրեն էին ուղղված, այլ Միշելի հիասքանչ զգեստին» (թարգմանությունը հետազոտողինն է, էջ 107)): Այստեղից ատենախոսը եզրակացնում է. «Հարկ է նշել, որ Օբամայի հիշյալ բառերը ցույց են տալիս, որ նա ամենևին բարձր կարծիքի չէ իր մասին, չնայած իր սոցիալական բարձր կարգավիճակին»:

Իրականում այստեղ Բարաք Օբաման դրսևորում է քաղաքավարության հետևյալ մաքսիմները՝ նրբազգացություն /tact/ և ինքնապարծության բացակայություն /approbation/, երբ գովասանքով խոսում է ոչ թե իր, այլ ուրիշի մասին: Եվ եթե մարդը ցուցաբերում է նրբազգացություն և չի տառապում ինքնագովեստով՝ համեստ է, դա ամենևին չի նշանակում, որ նա կարող է լինել ցածր կարծիքի իր մասին:

Քաղաքավարության բոլոր մաքսիմները վառ դրսևորումներ են գտել Բարաք Օբամայի ելույթներում և դրանց մեջ գլխավոր տեղ է զբաղեցնում համեստությունը և պարտադրանքի բացակայությունը: Զարմանալի չէ, որ Օբաման գրեթե իր յուրաքանչյուր խոսքը սկսում է I think, երբեմն I believe, I guess նախադասություններով: Կարծում ենք, քաղաքավարության յուրաքանչյուր տեսակ կարելի էր հետազոտել մաքսիմների շրջանակներում, ինչը կդարձներ հետազոտությունը ավելի արդյունավետ և հետաքրքիր:

3. Կարծում ենք, երրորդ գլխի ենթագլուխը՝ «Պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների լեզվագործաբանական առանձնահատկությունների համեմատական վերլուծությունը» հիմնականում կրկնում է (նույն օրինակներով) այն, ինչ խոսվել է նախորդ նյութում»:

4. Եզրակացության մեջ ուսումնասիրության արդյունքները ներկայացված են շատ ընդհանրական և չեն արտացոլում տեսություն-նյութ-վերլուծություն-եզրահանգում շղթան:

5. Աշխատանքը ներկայացվել է տեխնիկական թերություններով՝ սխալ էջակալում և վրիպակներ, ինչը դժվարեցնում է հետևել աշխատանքի տրամաբանական ընթացքը:

Կարծում ենք, վերոհիշիալ թերությունները սկզբունքային են և դրանց շտկումը պարտադիր է ատենախոսությունը պաշտպանության ներկայացնելու համար:

Ատենախոսությունը քննարկվել է և վերջինիս վերաբերյալ եզրակացությունը հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 4 նիստում՝ բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանի, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանի, բ.գ.թ., պրոֆեսոր Ե. Մխիթարյանի, մ.գ.թ., դոցենտ Ռ. Խաչատրյանի և բ.գ.թ., դոցենտ Ռ. Ասատրյանի մասնակցությամբ:

Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար

բ.գ.թ., դոցենտ ԳՈՀԱՐ ՄԵԼԻՔՅԱՆ

Գոհար Մելիքյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՄՀ գիտական քարտուղար, մ.գ.թ., դոցենտ ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ

8-ը նոյեմբերի, 2022թ.